ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

գ. Փարաքար

26/02/2024թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Փարաքար համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ: Փարաքար համայնքի ավագանու նիստը սկսվեց 10:00:

Բացակա էին՝ Օնիկ Ախվերդյանը, Լիանա Գասպարյանը, Վալոդյա Գրիգորյանը, Նելլի Եսայանը, Ռուդիկ Զեյնալյանը, Էմմա Թորոսյանը, Մանուկ Ղազարյանը, Հովհաննես Մխիթարյանը, Հայկազ Սարգսյանը, Ավետիս Ֆարֆարյանը

Ավագանու նիստին մասնակցում էր Գոռ Սարիբեկյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Մինասյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Մանուկյանը:

Դավիթ Մինասյանը ընթերցեց Փարաքար համայնքի ավագանու անդամ Ռուբիկ Աղեկյանի դիմումը, ըստ որի 2024 թվականի փետրվարի 15-ից դադարեցնում է իր մասնակցությունը որպես <<Դավիթ Մինասյան խմբակցության>> անդամ և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու կարգով կգործի որպես ավագանու ազատ անդամ:

Լսեցին **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ** ***/ Զեկ.՝ Դավիթ Մինասյան /***

Օրակարգը հաստատելու որոշման նախագիծը դրվեց քվեարկությանԱվագանու անդամ Արաքսյա Վարդանյանը առաջարկեց ***օրակարգը հաստատել առանց*** <<Բարեկարգում տնօրինություն>> հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին **N**10-Ա հարցի, այն

վերադարձնել մեկամսյա ժամկետում լրամշակելու և փոփոխության ենթարկելու, հստակեցնելու «Բարեկարգում» տնօրինության գործառույթները, հետագայում ներկայացնելու և հաստատելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65- րդ հոդվածով՝ **Փարաքար համայնքի ավագանին որոշում է.**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 26-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում *N*1-Ա

Լսեցին **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ** ***/ Զեկ.՝ Լիլիթ Պետրոսյան /***

Գոռ Սարիբեկյանը հետաքրքրվեց, թե քանի խորհրդակցական մարմիններ են ձևավորվելու, եղավ պատասխանը՝ 3, դրանք են.

1) համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման ԽՄ.
2) կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի ԽՄ.
3) քաղաքաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսության հարցերի ԽՄ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի, 84-րդ հոդվածի 1-ին մասի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով՝ Փարաքար համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում *N* 2-Ա

Լսեցին **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ / Զեկ.՝ Լիլիթ Պետրոսյան /**

Ելույթ ունեցավ ավագանու անդամ Էմին Երիցյանը, նշեց, որ կան մի շարք կարգեր, որոնք դեռևս բաց են՝ հորդորեց սեղմ ժամկետներում լրացնել բոլոր կարգերը որոնք կհաստատվեն ավագանու կողմից, ինչպես նաև քննարկվեցին ընթացակարգային հարցեր, առաջարկեց, օրակարգում զեկուցողների անունը գրել լիարժեք, ըստ ընդունված կարգի զեկուցեն քաղ. պաշտոնյաները կամ տվյալ բաժնի ղեկավարները, նշանակել պատասխանատու անձ, ով կարձանագրի հանձնարարականները, նշելով կատարման ժամանակահատվածը, ինչպես նաև յուրաքանչյուր օրակարգի հարց՝ մեկ ֆայլում մեկտեղել կցելով նյութերը :

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Փարաքար համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում *N* 3-Ա

Լսեցին **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՐԱՔԱՐ ԳՅՈՒՂԻ «ՄԵՐՁԱՎԱՆԻ ԽՃՈՒՂԻ» ՓՈՂՈՑԸ «ԷԴԻԿ ԵՎ ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆԵՐԻ» ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ** ***/ Զեկ.՝ Դավիթ Մինասյան /***

Զեկուցողը հակիրճ ներկայացրեց Էդիկ և Արմեն Կարապետյանների անցած կյանքը և նրանց նվիրումը հայրենիքի կայացման գործում:

Ղեկավարվելով «Աշխարհագրական անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Մերձավանի խճուղու բնակիչների դիմումը, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ԳՄ/17955-2023 գրությունը, 2024 թվականի հունվարի 12-ին կայացած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի «Մերձավանի» խճուղին «Էդիկ և Արմեն Կարապետյանների» անվան փողոց անվանափոխելու մասին հանրային քննարկման արձանագրությունը՝ Փարաքար համայնքի ավագանին որոշում է.

1. Անվանափոխել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի «Մերձավանի խճուղին» «Էդիկ և Արմեն Կարապետյանների» փողոցի:

2. Հանձնարարել համայնքի ղեկավարին՝ կատարել սույն որոշումից բխող գործառույթները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ- 2 / Է. Երիցյան, Մ.Իսպիրյան/

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N4-Ա

Լսեցին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ / *Զեկ.՝ Գյուլգյազ Համբարձումյան* /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասերով՝ Փարաքար համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ոոշումն ընդունված է. /կցվում է որոշում N5-Ա

Լսեցին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ/ *Զեկ.՝ Քնարիկ Մելքոնյան/*

Գոռ Սարիբեկյանը հարց ուղղեց, թե ինչով է պայմանավորված 4115 հոդվածով նախատեսված այլ վարձատրությունների տարբերությունը, որոնք 2024 թվականին կազմում են 16 մլն ՀՀ դրամ, իսկ 2023 թվականին կազմել են 25 700 մլն ՀՀ դրամ: Պատասխան բացատրությունն էր, որ այդ ծառայությունները քաղիրավական պայմանագրերի աշխատողների վերաբերյալ է, նախապես կնքված պայմանագրեր դեռևս առկա չեն. տարվա ընթացքում առաջացող չնախատեսված դեպքերում քաղիրավական վարձատրությունների գումարն է կազմում վերոնշյալ թիվը:

Գոռ Սարիբեկյանը ցանկացավ տեղեկատվություն նաև 4212 հոդվածի՝ *Էներգետիկ ծառայությունների* վեաբերյալ, թե ինչով է պայմանավորված 2024 թվականի 45 մլն 5 հարյուր հազար ՀՀ դրամի ծախսը:

Քնարիկ Մելքոնյանը նշեց, որ 31 մլն ՀՀ դրամը 2023 թվականին հաստատված գումարն է, տարվա ընթացքում եղել են փոփոխություններ, հաստատումից հետո որոշակիորեն տվյալ հոդվածով

նախատեսված բյուջեն ենթարկվել է փոփոխության, որը կնպված է համայնքում գիշերային լուսավորության հետ:

Գույքի և սարքավորումների վարձակալություն ՝ հոդված 4216, ըստ որի, 300 հազար ՀՀ դրամը դարձել է 6 մլն 300 հազար ՀՀ դրամ. Գոռ Սարիբեկյանը հաշվետվություն պահանջեց նաև այս ծախսի վերաբերյալ:

Ի պատասխան՝ Քնարիկ Մելքոնյանը նշեց, որ 6 մլն ՀՀ դրամ նախատեսել են բարեկարգման համար՝ նախնական հաշվի առնելով,որ լուսավորությունը կազմակերպելու համար անհրաժեշտ է ամբարձիչ մեքենա՝ կռունկ:

Քնարիկ Մելքոնյանը նաև նշեց, որ տվյալ պահին փորձագիտական եզրակացության չեն կարող ուղարկել:

Էմին Երիցյանը առարկեց՝ նշելով, որ փորձագիտական եզրակացությունը տալիս է պատասխան, թե որքանով է որպես իրավական ակտ՝ այն ճիշտ կազմված, իսկ թվաբանությունը(գումարի չափը) որոշում է ավագանին:

Էմին Երիցյանը հետաքրքրվեց, թե ինչպես են որոշվել բյուջեում առկա գումարները:

Արաքսյա Վարդանյանը նշեց, որ 2024 թվականի բյուջեի գումարները համեմատվել են 2023 թվականին կատարված հանրային լսման ընթացքում քննարկման բյուջեի հետ, ինչպես նաև տարվա ընթացքում կատարված փոփոխությունների հետ, և համակարգվել-բալանսի է բերվել:

Էմին Երիցյանը հավելեց, որ ցանկացած հոդվածով նախատեսված բյուջե հնարավոր է որոշել կանխատեսումով, չօգտագործվելու դեպքում հնարավոր է կատարել տեղափոխություն:

Քնարիկ Մելքոնյանը նշեց,որ աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայության բյուջեին տրամադրված 2 մլն ՀՀ դրամը կանխատեսում է, քանի որ նախորդ տարի որևէ էական ծախս չեն ունեցել:

Էմին Երիցյանը կարծիք հայտնեց, որ յուրաքանչյուր աշխատող 3 տարին մեկ անգամ պետք է անցնի մասնագիտական վերապատրաստում. դա պարտադիր նորմ է, որը պետք է ապահովել:

Արաքսյա Վարդանյանը առարկեց, որ մասնագիտական վերապատրաստման համար համայնքապետարանը բյուջեից գումար չի հատկացնում, քանի որ դա անվճար է:

Էմին Երիցյանը շեշտեց, որ խոսքը ոչ թե համայնքային, այլ մասնագիտական վերապատրաստման մասին է:

Արաքսյա Վարդանյանը առաջարկեց հաջորդ եռամսյակի համար հաշվել, թե քանի հոգի են գնում վերապատրաստման և տվյալ հաշվարկի հիման վրա կատարել փոփոխություն:

Քնարիկ Մելքոնյանը հավելեց, որ առկա է 215 մլն ՀՀ դրամի պահուստային ֆոնդ, որը չնախատեսված ծախսերի համար է:

Մարիամ Իսպիրյանը առաջարկեց հաստատել բյուջեն, հետագայում հաջորդիվ հաստատվող կարգերով առաջնորդվել և բյուջեում կատարել փոփոխություններ:

Գոռ Սարիբեկյանը հետաքրքրվեց, թե ինչով է պայմանավորված 4237 և 4239 հոդվածներում ներկայացուցչական ծախսերի և այլ բնույթի ծախսերի 6 մլն ՀՀ դրամից դառնալը 12 մլն ՀՀ դրամ, հնարավո՞ր է արդյոք այս հոդվածներով նախատեսված բյուջեի որոշակի մասը տեղափոխել աշխատակազմի մասնագիտական ծախսերի հոդված:

Ի պատասխան հարցի՝ Քնարիկ Մելքոնյանը նշեց, որ կարող են կատարել փոփոխություն՝ հավելելով, որ 4239 հոդվածը ընդհանուր բնույթի այլ ծառայությունների մասին է, 2023 թվականին հաստատվել է 6 մլն ՀՀ դրամ, սակայն տարվա ընթացքում փոփոխության է ենթարկվել:

Գոռ Սարիբեկյանին հետաքրքրեց, թե ինչ ծառայությունների համար է 6 մլն ՀՀ դրամի փոփոխության ենթարկվել: Քնարիկ Մելքոնյանը պատասխանեց, որ համայնքում իրականացրել են ամանորյա լուսավորության և ձևավորման ծրագիր, այդ իսկ պատճառով բյուջեն տարվա վերջում ենթարկվել է փոփոխության:

Գոռ Սարիբեկյանը հետաքրքրվեց՝ արդյոք ներկայցուցչական ծախսը հատել է6 մլն ՀՀ դրամի սահմանը:

Քնարիկ Մելքոնյանը պատասխանեց, որ ներկայացուցչական ծախսերի ընդհանուր բնույթի այլ ծառայությունների հոդվածով կատարվել է ծախսեր 11 502 543 ՀՀ դրամի չափով:

Էմին Երիցյանը ցանկացավ տեղեկություն ստանալ՝ արդյոք հանրային լսման արձանագրությունը կազմվել է, քանի որ հանրային լսման ընթացքում արվեցին մի շարք առաջարկություններ, և այդ ամենը պետք է արտացոլել բյուջեում, և նաև հետաքրքրվեց, թե առաջարկություններից որոնք են, որ առկա են բյուջեում:

Լիլիթ Պետրոսյանը հավելեց, որ արձանագրությունը կազմվել է:

Էմին Երիցյանին հետաքրքրեց, թե ավագանու նիստերի անցկացման համար տեխնիկայի ապահովումը որ հոդվածով է նախատեսված, և ի՞նչ են ձեռք բերել, ինչի՞ վրա է ծախսվել գումարը:

Քնարիկ Մելքոնյանը պատասխանեց, որ 5122-ը սարքավորումների ձեռքբերման հոդվածն է, հոդվածով նախատեսված է 20 մլն ՀՀ դրամ: Անցած տարի Արևաշատ բնակավայրի մանկապարտեզի համար ձեռք է բերվել գույք:

Էմին Երիցյանը նշեց նաև, որ անհրաժեշտություն կա աշխատակիցների պայմանների բարելավման, ունենք վարչական շենքի խնդիր, արդյո՞ք բյուջեում առկա է նախագծային կամ նախահաշվային հոդված:

Գոռ Սարիբեկյանը հետաքրքրվեց, թե ինչու է 5134 հոդվածի՝ նախագծահետազոտական ծախսերի բյուջեն 21 մլն ՀՀ դրամից նվազել 10 մլն ՀՀ դրամի, ինչո՞վ է այն պայմանավորված:

Քնարիկ Մելքոնյանը նշեց, որ 10 մլն ՀՀ դրամը պայմանական թիվ է՝ տարվա ընթացքում չնախատեսված աշխատանքներ կատարելու համար:

Էմին Երիցյանը նշեց, որ Թաիրով բնակավայրում չունենք վարչական շենք, նախատեսված է նախագծային հաշվարկ:

Քնարիկ Մելքոնյանը նշեց, որ կապիտալ ծախսերը տվյալ բյուջեում նախատեսված չեն, քանի որ նախնական բյուջե է:

Գոռ Սարիբեկյանը ցանկացավ տեղեկություն 5112 հոդվածի՝ շենք-շինությունների վերաբերյալ.

Քնարիկ Մելքոնյանը նշեց,որ 482 մլն 800 հազար ՀՀ դրամ եղել է հաստատված, քանի որ 100 մլն ՀՀ դրամ եկամուտ ենք նախատեսում հողի օտարումից, այդ գումարը բաշխվել է հոդվածներով նախատեսված բյուջեների մեջ, որից 70 մլն ՀՀ դրամը՝ 5112 հոդվածով շենքերի և շինությունների կառուցման համար, 20 մլն ՀՀ դրամը՝ 5122 հոդվածով վարչական սարքավորումների ձեռքբերման համար և 10 մլն ՀՀ դրամը՝ նախագծահետազոտական ծախսերի:

Գոռ Սարիբեկյանին հետաքրքրեց, թե ինչով է պայմանավորված, որ 5113 հոդվածով նախատեսված բյուջեի համար (շենք շինությունների կապիտալ վերանորոգում) գումար նախատեսված չէ:

Պատասխան հնչեց, որ դեռևս առկա չէ նախնական արժեք:

Էմին Երիցյանը նշեց, որ հանրային լսման որևէ առաջարկ արտացոլված չէ բյուջեում:

Գոռ Սարիբեկյանը, առաջարկեց աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություն բյուջեի մասին հոդվածում փոփոխություն կատարել: Ներկայացուցչական ծախսեր և ընդհանուր բնույթի այլ ծառայություններ նախատեսված գումարից 5 մլն Հայաստանի Հանրապետության դրամ փոխանցել աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություն մասին հոդվածին:

Ելույթ ունեցավ ավագանու անդամ Արաքսյա Վարդանյանը, առաջարկեց սահմանված բյուջեն հաստատել, հաջորդ նիստի ժամանակ կատարել փոփոխությունը:

Ելույթ ունեցավ ավագանու անդամ Էմին Երիցյանը առաջարկեց կատարել կապիտալ ծախսերի պլանավորում:

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 90-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Փարաքար համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2024 թվականի բյուջեն՝ համաձայն NN 1-10-րդ հավելվածների :

2. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ վերաբաշխումներ կատարելուն:

3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2024 թվականի բյուջեի ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման փոփոխություններ կատարելու համար 50 տոկոսի չափաքանակով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-10 Դեմ-1 / Է.Երիցյան/ Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում *N* 6-Ն

Լսեցին ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ / Զեկ.՝ Լիլիթ Պետրոսյան /

Ելույթ ունեցավ համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանը՝ նշելով, որ ՏԱՊ-ում կան վրիպակներ,առաջարկեց ուղղել:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով Փարաքար համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը ՏԱՊ -ը ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-1 /Է.Երիցյան/

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում *N7*-Ա

Լսեցին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 114-Ա ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 2 ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ/ Զեկ.՝ Արաքսյա Վարդանյան /

Ելույթ ունեցավ ավագանու անդամ Էմին Երիցյանը՝ նշելով, որ խմբակցության գործավարների անհրաժեշտության մասին խոսվել է նախորդ նիստերի ընթացքում, սակայն արձանագրության մեջ առկա չէ տվյալ կետը. հարցը հետևյալն է՝ որքանով է իրավական ձևակերպում ստացել, քանի որ անհրաժեշտ է խնդրին ընթացք տալ:

Արաքսյա Վարդանյանը նշեց, որ նախորդ տարի հաստատվել են խմբակցության գործավարի հաստիքները և սահմանվել աշխատավարձերը:

Վերոնշյալին արձագանքեց Գայանե Մանուկյանը՝ նշելով, որ կարգում գրված է, թե որ խմբակցությունը պետք է ունենա գործավար որի հետ պետք է կնքել ժամկետային պայմանագիր:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով ավագանու անդամ Արաքսյա Վարդանյանի առաջարկությունը՝ Փարաքար համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 114-Ա որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում *N* 8-Ա

Լսեցին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 115-Ա ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ Զեկ.՝ Արաքսյա Վարդանյան /

Առաջարկեց որոշակի ժամանակահատված տրամադրել գույքագրման կանոնադրության փաստաթղթերը հաստատմանը:

Գոռ Սարիբեկյանը հավելեց նաև, որ դեռևս չունեն գույքագրված փաստաթղթեր՝ արխիվացնելու համար, կան նաև մեծ ծավալի փաստաթղթեր, և դրանց համար սահմանված հնգամյա արխիվացման պարտականություն, անհրաժեշտ է սահմանել արխիվացման կարգ, ինչպես նաև անհրաժեշտ է արխիվի համար նախատեսված վայր և աշխատակից:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Բարեկարգում» տնօրինության տնօրենի զեկուցագիրը ՝ Փարաքար համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի համայնքային հիմնարկի, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 115-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 7-րդ տողում «105,000» -ի փոխարեն կարդալ «142,000» :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում *N* 9-Ա

Լսեցին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ / Զեկ.՝ Դավիթ Մինասյան /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Քաղաքացիական օրենսգրքի 685-689-րդ հոդվածներով՝ Փարաքար համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքին սեփականության իրավունքով պատկանող 2271.4 գծամետր գազատարը, որից ցածր ճնշման գազատար D 159 մմ 48.5 գծմ, D 133 մմ 51.4 գծմ, D 108 մմ 31.2 գծմ, D 89մմ 475.7 գծմ, D 76 մմ 176.4 գծմ, D 57 մմ 1488.2 գծմ, /այսուհետ՝ Գույք/ անհատույց օգտագործման իրավունքով, անորոշ ժամկետով տրամադրելու «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Արմավիրի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղին (ԳԳՄ)՝ գազամատակարարում իրականացնելու նպատակով:

2. «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Արմավիրի ԳԳՄ-ի հետ կնքել Գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է./կցվում է որոշում N10-Ա

Լսեցին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐՎԱ ՍԱՀՄԱՆՈՒՄ / *Զեկ.՝ Դավիթ Մինասյան* /

Ավագանու անդամ Էմին Երիցյանը առաջարկեց հարց ու պատասխանի նիստ ունենալ, որտեղ ավագանու անդամները իրենց հարցերը կուղղեն համայնքի ղեկավարին, ղեկավարի տեղակալներին, ինչպես նաև մյուս ստորաբաժանումների ղեկավարներին, նաև առաջարկեց աշխատակազմի վարչական ղեկավարների հետ միասին պատրաստել օտարվող հողերի ցանկը :

Գոռ Սարիբեկյանը առաջարկեց յուրաքանչյուր հարցի մեջ ներառել մշտական հանձնաժողովների դրական տեղեկանքները :

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Փարաքար համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2024 թվականի առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի մարտի 7-ը, ժամը 15:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է./կցվում է որոշում N 11-Ա

Համայնքի ղեկավար

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Գայանե Մանուկյանը _____